

Սեւ վեղարին տակ իր դէմքը գունատ էր ու տխուր:

Ու երբ ան իր նոժուղին գլուխը դէպի մեծ դուռը դարձուց, ոստիկանները թոան իրենց ձիերուն վրայ, ու զանոնք խաղցնելով շրջապատեցին զայն ու յառաջ շարժուեցան:

Կառավարութեան շէնքի պատուհաններէն քանի մը ֆէսաւոր գլուխներ կը դիտէին այս անսխառունակ շքերթը, մինչեւ որ անոնք անհետացան կողմնակի փողոցի տուններուն եւ ծառերուն հովանիին տակ:

Սրաբաւ մեկնող այս խումբի ձիերուն ամբակներուն չոր ու կարծր ձայնը, որ երկարատեն կը լսուէր վաղ առաւօտուան խաղաղութեան ու զովին մէջ, դեռ այսօր ալ կ'արձապանէր ականջներուս մէջ...

(Շարունակելի)

ՃՇԴՈՒՄ

«Հայրենիք» ամսագրի 1927 թ. փետրուարի թւոյն մէջ (թիւ 4) հրատարակուած «Քանի մը յուշեր Ծ. Գարահիսարէն»-ի մէջ քանի մը վրիպումներ սպրդած էին, որոնք հետեւեալն են.—

էջ 121, տող 28 վերէն վար — Ծ. Գարահիսար հաստատուած Կեսարացի առեւտրական մը՝

Պէտք է ըլլայ՝ Ծ. Գարահիսար հաստատուած Կեսարացի առեւտրական Հաճի Կարապետ:

էջ 124, տող 23, վերէն վար — Հաճի Միսաք Նշանեանը պէտք է ըլլայ Հաճի Միսաք Օղանեան:

էջ 126, տող 11, վերէն վար — Միսաք վարդապետը պէտք է ըլլայ Վաղինակ վարդապետը:

ԲՈՂԵՆՇՏԷՂԻՏ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԹԻՒԵՐ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գրեց՝ ԱՐՏ. ԱՔԵՂԵԱՆ

II

Արտիկանի մասին մեր առած տեղեկութիւններից յետոյ ամենից աւելի արժէքաւորը այն տուեալներն են, որ մենք գտնում ենք Բողենշտէղտի մօտ՝ Հայաստանի եւ Կովկասի վիճակագրութեան, ինչպէս նաեւ վարչական բաժանումներին վերաբերեալ: Սրանք առանձին կարեւորութիւն են ստանում մանաւանդ այն տեսակէտից, որ աւելի վաղ են հրապարակ հանուել, քան մինչեւ իսկ Հաքսոհաուզէնի տեղեկութիւնները:

Ճիշդ է, Հաքսոհաուզէն մի քանի ամիս աւելի առաջ է ճամբորդել Հայաստան (1843 թ. օգոստոս) քան Բողենշտէղտ (1844 մարտ), բայց վերջինիս՝ ցեղագրական-վիճակագրական տեսակէտից ամենից աւելի շահեկան աշխատութիւնը, «Կովկասի ժողովուրդները», լոյս է տեսել դեռ 1848-ին, միւսներն էլ 1850-ին, մինչ Հաքսոհաուզէնի «Անդրկովկասը»

հրապարակ է հանուել աւելի ուշ (դեբմաներէնը 1856-ին, իսկ անգլերէնը՝ 1849-ին):

Վիճակագրական տեղեկութիւններ մենք գտնում ենք Բողենշտէղտի մօտ զանազան էջերում ցրուած: «Կովկասի ժողովուրդներ»-ի մէջ նոյն այդ խնդրի մասին մի յատուկ, փոքրիկ գլուխ կայ Ա. գրքի վերջում, «Վիճակագրական նօթեր» վերնագրի տակ (էջ 259-262):

Ահա նրա էութիւնը.—

Կովկասի ժողովուրդների լիակատար վիճակագրութիւն գրելու փորձը Բողենշտէղտ հերկույթեան աշխատանքի է նմանեցնում, նկատի ունենալով այն պարագան, որ «Լեռնական անկախ ժողովուրդների մօտ երբեք էլ վիճակագրութիւն չէ կատարուել»։ Ինչպէս նաեւ այն, որ «անգամ ուսական տիրապետութեան տակ գտնուող նահանգներին վերաբերեալ տուեալները տարբերուած են իրարից»